ԱԲԵՂԱՅ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։

Ասէ ցՑիսուս. և ո՞վ է իմ ընկեր։ Պատասխանէ Նա Յիսուս և ասէ. այր մի էջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եդին, Թողին կիսամահ և գնացին...

Աւետարան։

I.

«Ցիշում եմ, լիշում, օրիո՛րդ, ես այն
Գիշերն ու կաղնին, որի տակ չոքած
Երգուեցայ ես ձեզ սիրել յաւիտեան,
Որպէս չէ սիրել ոչ մի արարած։
Անցան այդ օրից երկար տարիներ,
Ես բոլորեցի Հայրենի աշխարհ,
Տեսայ այլ մարդիկ, այլ դէմք ու աչեր
Ու ձեր սէրն անցաւ անհետ ինձ համար։
Նենգեցի ես ձեզ... Մի՛ խնդրէք զուր ինձ,
Ոչ աչք արտասուող, ոչ սիրտ աւերուած
Կարող չեն դարձնել ձեր գիրկն ինձ նորից—
Ես ձեզ վաղուց եմ վաղուց մոռացած։

II.

Իբրև հուր աղօտ շիջաւ ձեր պատկեր,
Երբ գերեց ուրիշն իմ սիրտն ու հոգին.
Եւ հիմա արդէն ցերեկ ու գիշեր

Նա է միշտ կանգնած աչքիս առաջին.
Նորան է միայն իմ գիրկըս բացում,
Նորան եմ սեղմում կրծքիս կարոտով,
Նորա՛ շուրթերն եմ անվերջ համբուրում,
Ես շունչ եմ առնում միայն նորանով։
Բայց մի՛ նախանձէք, օրիորդ. նորա
Համար չէ ժրպտում այս ուրախ աշխարհ,
Ու թէ գիտենաք ինչպէս խեղճ է նա,
Ինչպէս տարաբաղդ, աղքատ ու թշուառ։

III.

Ես ձեզ կը պատմեմ դառը պատմութիւն
Բորբոքուող սիրոյ, որ անդրթաբար
Զարչարում է ինձ ցաւերով անհուն
Ու կը չարչարէ դեռ երկար երկար։
Գուցէ կը ներէք դուք այն ժամանակ,
Որ ես դրրժեցի երդումըս տրուած,
Որ յանձն առայ ես խաչ ու չարչարանք՝
Քաղցր ընտանեկան վայելքը թողած.
Գուցէ կ'իմանաք, որ կայ մի այլ սէր,
Որի առաջին սէրը կանացի
Հանգչում է, որպէս լուսին ու աստղեր
Ցաղթական շողովն արևածագի։

IV.

Դա սէրն է հընշուած, մոռացուած մարդու...
Ես տեսայ նորան մի օր ծերունու
Խորշոմած դէմքով կանգնած փողոցում՝
Ամօթահարուած նա ձեռք էր մեկնում։
Նորա լայն թիկունք, նորա բարձր հասակ,
Թէև կորացած տարիների տակ,
Վրկայում էին, որ անշուշտ մի օր
Եղել էր նա քաջ ու կըտրիճ բանուոր։
Անշուշտ չէր ծնուել այդպէս նա մենակ,
Նա ունէր գուցէ և կին և զաւակ,

Ունէր բարեկամ, ծանօթ, ազգական,
Ժառանգած հօրից մի յարկ սեպհական։

V.

Բայց ուր են դոքա... Ո՞ր ձեռքն անօրէն
Խլեց նորանից օրական պարէն,
Ո՞վ քարշեց նորան հայրենի յարկից,
Ո՞վ յափշտակեց որդու գրգռանքից։
Այդ վաղուց էր շատ. երևի ինքն էլ
Կարծում է հիմա լրսած առասպել
Խաղաղիկ օրերն հայրենի գիւղում,
Հեռու մոռացած սարի ծերպերում։
Եւ ով ձեզ կ'ասէ—դէպի ուր հիմա
Դողդողուն քայլով երերում է նա
Քաղցած, ծարաւի, մերկ, անկարեկից,
Վաղուց դուրս ձրգած մարդկութեան հաշուից։

VI.

Գնում է... Արդեօք գոնէ մի անգամ
Պատահէ՞լ է ձեզ մընալ տարաժամ
Գիշերեան պահուն ճանապարհներին,
Մինչ կատաղութեամբ շընչում է քամին,
Մինչ մրռայլ ամպեր ծածկում են երկինք,
Մինչ չարագուշակ բուք ու փոթորիկ
Պրտոյտ են անում ձեր շուրջն երգելով
Մեռելաթաղի նրւագ կազմելով.—
Այնտեղ է, այնտեղ գընում ծերունին։
Ու թող նա գնայ... Մահաշունչ քամին
Գրթած կը լինի, գուցէ, մեզանից,
Կը փրրկէ նորան այդ գառն օրերից։

VII.

Եւ որքան այդպէս անտոհմ և անդարմ
Ձեռք են կարկառում մեզ ըստեղծուածներ.
Իբրև ոսկրը շան, մի մանրիկ դրրամ

Ձրգում ենք, անցնում դէմքով անտարբեր։
Ա՛խ, գէթ մի վայրկեան կանգ առէք այդտեղ,
Նայեցէ՛ք նոցա վառուող աչերին,
Որքան ցաւ, կրսկիծ, չարչարանք ահեղ
Կը կարդաք նոցա խամրած դէմքերին,
Կը կարդաք արդար գանգատ ձեզանից,
Բողոք ուղղուած ամբողջ մարդկութեան,
Որ խլեց նոցա տուն ու սերընգից
Ու ձրգեց աշխարհ անտէր, անպաշտպան։—

VIII.

Ես տեսայ նորան մի այլ օր—մանկան
Թոյլ ու նիհարիկ մարմին ըստացած,
Սեղմըւել էր նա այն միակ դրրանն,
Ուր հաւաքւում են մերժւածն ու զրկւածն։
Բաց գրլուխ և կուրծք, մերկ սրրունգ ու ոտ
Այրում էին վառ արևի տակին,
Տարիների կեղտն ու վէրք ժանտահոտ
Ծածկում էին խիտ անխընամ մարմինն.
Աչքերը հանգած, երեսը դալուկ,
Խոնարհած գրլուխն, իբրև մեղապարտ,
Կանգնած էր այնտեղ տարաբաղդ մանուկ—
Մարդկութեան մեղքի այդ զոհն անարատ։

IX.

Ես ճանաչեցի.—դա նա է, որին
Դեռ ևս արդանդում անիծում է մայրն,
Որին արցունքով, տրրտմութեամբ խորին,
Իբրև հիւր անկոչ, բերում են աշխարհ.
Դա նա է, նա է, որին ըշտապով
Մութ ու մրռայլի գաղտուկ ժամերին,
Օրօրոցի տեղ դրնում են քարին
Ծրնրնդեան օրից ցաւին մատնելով։
Եւ Աստած գիտէ թէ ինչպէս դոքա

Շուն ու գազանի ազատուած ճանկից
Դեռ մանն են գալիս աշխարհի վերայ
Թէև հալածուած, մերժուած ամենից...

X.

Քար չէր իմ սիրտը, օրիորդ. այդ օր
Շրջում էի ես խելագարի պէս,
Ես լալիս էի մոռացած բոլորն—
Ինձ տանջում էին ցաւերը աղեկէզ։
Առաջին անգամ ահա այդ օրեր
Ըզգացի, որ լուռ է սէրդ իմ սրտում,
Որ ազազալի երազած պատկեր
Իւր դիւթիչ ուժովն այլ չէ գրաւում,
Ըզգացի ամբողջ մարմնով ու հոգով,
Որ կեանք անձնական, վայելք ու բարիք
Կարող չէին ինձ անել երջանիկ
Պատած-պաշարուած տառապեալներով։»